

Լիլիթ Խաչատրյան

ՀԱՍԱՌՈՏ ԱՎԱՐԿ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ

*«... Մարդ արարածին միայն ու միայն Մայր Հայրենիքն է
երջանկացնում, իրական մարդու աստիճանի բարձրացնում:
Առանց հայրենիքի չկա մարդկային ու մարդու չափանիշ»:*

Հովհաննես Ասատրյան

Բնանկար, յուղաներկ, ջրաներկ, ռեալիզմ, ֆովիզմ, կուբիստներ, դիմանկար, նատյուրմորտ, տպավորապաշտ

Քսաներորդ դարի հայ արվեստի աստղաբույլի մեջ գեղանկարիչ Հովհաննես Ասատրյանը դասվում է այն արվեստագետների շարքին, որոնց ստեղծագործությունները համալրում են վերջին տասնամյակներում հայ արվեստի գանձերը: Երկարատև կյանքի ընթացքում (1914-2006 թթ.) նա շարունակ ստեղծագործել է նախ Արևելքում (Սիրիա, Լիբանան, 1932-1946 թթ.), ապա՝ Խորհրդային Հայաստանում (1946-1974 թթ.) և ի վերջո՝ ԱՄՆ-ում (1975-2006 թթ.)՝ մշտապես մնալով հայ, վրձնած կտավներով աշխարհասփյուռ հայությանը և առհասարակ արվեստասեր մարդկությանը ներկայացնելով հայկական եկեղեցական ճարտարապետության ու հայրենի բնության իր ընկալումը:

Տեղափոխվելով Լոս Անջելես՝ Հովհաննես Ասատրյանը 1975 թ. Երևանից ԱՄՆ է տեղափոխել իր գեղարվեստական ժառանգության զգալի մասը, որն այժմ գտնվում է գեղանկարչի ամերիկաբնակ ժառանգների մոտ: Արվեստագետի բազում ստեղծագործություններ գտնվում են Հայաստանի Ազգային պատկերասրահի՝ Երևանի և հայաստանյան այլ մասնաճյուղերում, Էջմիածնի պետական թանգարանում, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում, Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում, Սարյանի Ակադեմիայի թանգարանում (Հալեպ), Բուդապեշտի Հայկական կաթոլիկ եկեղեցու թանգարանում, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության թանգարանում (Անթիլիաս, Լիբանան), Վենետիկի և Վինեննայի (Ս.Ղազարի Մխիթարյան միաբանության) թանգարաններում, Անգլիայում, Ֆրանսիայում և մասնավոր հավաքածուներում: Գեղանկարչի գործունեության և ստեղծագործական ուղու վերաբերյալ հողվածներ են տպագրվել Հալեպում, Բեյրութում, Հայաստանի մամուլում, ինչպես նաև Փարիզում, Նյու-Յորքում և Լոս Անջելեսում, երկու հազվագյուտ հողվածներ՝ Հալեպի ֆրանսիական «Leclair du nord» թերթում:

Բարեբախտաբար պահպանվել են նկարչի ձեռքով գրված ինքնակենսագրական նյութերը, որոնք արժեքավոր աղբյուր են Ասատրյանի մանկության և նախքան Հայաստանում հաստատվելու տարիների մասին: Հարկ է նշել, որ, այնուամենայնիվ, նկարչի ամբողջական գեղարվեստական կերպարը ներկայացնող որևէ աշխատություն դեռևս լույս չի տեսել:

Տասնիններորդ դարի վերջին և քսաներորդ դարի առաջին տասնամյակներին թուրքական կառավարության կողմից իրականացված Հայոց ցեղասպանության զոհերի շարքում էին նաև Հովհ. Ասատրյանի ծնողները՝ Աբրահամը և Խաթունը: Նկարչի ինքնակենսագրական նյութերից տեղեկանում ենք, որ նա ծնվել է 1914 թ. Կիլիկիայում՝ Ամանոսի լեռներում գտնվող Հասանպելլի կոչվող վայրում: Որբահավաքներն այլոց հետ միասին փոքրիկ Հովհաննեսին ևս տեղավորել են Բեյրութի Քելեկյան որբանոցը¹: Այնուհետև նա 1926թ. տեղափոխվել է Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատություն, որտեղ անցկացրած տարիների ընթացքում վարժարանի նկարիչ-ուսուցիչների (Առաքել Պատրիկ, Հրաչյա Քռուզյան) հովանու ներքո ուսանել է ջանասիրաբար և ձեռք բերել մասնագիտական հմտություններ: Տասնութամյա երիտասարդը 1932 թ. իր կյանքի ժամանակավոր հերթական հանգրվանն է գտնում ժամանակին Սիրիայի տարածքի մաս կազմող Ալեքսանդրեթ քաղաքում: Հինգ տարի անց երիտասարդ նկարիչը Հալեպում կազմակերպում է իր անդրանիկ ցուցահանդեսը՝ ներկայացնելով ութսուն յուղաներկ և ջրաներկ ստեղծագործություններ: Նկարչության հանդեպ ունեցած սիրո զորությամբ Ասատրյանը կարողանում է հաղթահարել Հայոց Եղեռնի որբի ճակատագրին վիճակված դժվարությունները²: Տակավին երիտասարդ նկարիչը ասել է, որ բնությունն է իր արվեստի գլխավոր միջավայրը: Ասատրյանը նշել է, որ ամենից շատ սիրում ու գնահատում է գյուղական աշխատատար, պարզ և դրանով իսկ բազմաբեղուն կյանքը, այն կյանքը, որի սերը կուզեր ներշնչել ամեն մի հայի: Ահա թե ինչու նկարների մեծ մասում ներկայացված են հերկվող դաշտը, գյուղական ճամփան՝ գնացող և վերադարձող շինականներով, կենդանիներով և մանավանդ կովերով, որոնք գյուղական աշխատանքի բարի խորհուրդն են մարմնավորում: Նկարիչը նախընտրում էր կոշտ վրձնով նետված պոռթկացող գույները և ամենից շատ՝ բաց մանուշակագույնը, որը տիրապետող է իր բնակարաններում: Արևն ու բանաստեղծական լուսինը բացակայում են, բայց միշտ ներկա է դրանց ազդեցությունը. այդպիսին է նկարչի նախասիրությունը³:

Երիտասարդ Ասատրյանը նկարչություն էր դասավանդում Հալեպի ազգային վարժարանում, տարված էր արվեստի պատմության ուսումնասիրությամբ՝ ընդհուպ մինչև քսաներորդ դարը, հետաքրքրվում էր արվեստի հոսանքներով, որոնք մեծապես ազդել են նրա ստեղծագործությունների վրա: Հալեպյան 1943 թ. ցուցադրությանը հաջորդել է նմանատիպ նկարահանդես նաև Բեյրութում, որտեղ ջերմ ընդունելության է արժանացել: Հաջորդ տարվա հալեպյան ցուցահանդեսը կազմակերպվել էր անգլիական հյուպատոսի հովանավորությամբ: Ներկայացված ութսուն նկարների մեծ մասի գնորդները անգլիացի ու ֆրանսիացի սպաներն էին, ինչպես նաև Ֆրանսիայի հյուպատոսը՝ իր կնոջ հետ, ովքեր մեծ գովեստով են արտահայտվել Ասատրյանի

¹ Տե՛ս Հ. Ասատրյան, Ինքնակենսագրություն, Երևան, 1946 թ., Հայաստանի նկարիչների միության արխիվ, ֆոնդ 1352, Անձնական գործ №19, էջ 15:

² Տե՛ս անստորագիր «Արև» օրաթերթ, 23 սեպտ., 1937 թ.:

³ Տե՛ս նույն տեղում:

արվեստի մասին¹: Այս ցուցահանդեսի կապակցությամբ հալեայան «Առավոտ» թերթում լույս տեսած ակնարկում հողվածագիրը Յովի. Ասատրյանին որակել է որպես «ներ նկարչության Մեծարենց»²՝ ճշելով, որ Ասատրյանը բնանկարիչ-արվեստագետ է՝ հավիտենական լույսով և բարի հույզերի առատությամբ, ծիւրով ու ծաղիկներով, կենդանիների հուզական ներկայությամբ³:

Հայրենադարձվելուց առաջ գեղանկարչի վերջին ցուցահանդեսը կազմակերպվել է Բեյրութում 1945թ. Կիլիկիո Մեծի Տան կաթողիկոս, հայ մշակույթի մեծ երախտավոր, անվանի հայագետ և արվեստի պատմաբան Գարեգին Յովսեփյանի հովանավորությամբ⁴: Նշված ցուցադրությանը ներկա է եղել նաև ֆրանսիացի քննադատ Ժորժ Սիրը, ով խորհուրդ է տվել Ասատրյանին մեկնելու Փարիզ: Գեղանկարչին, սակայն, բուլրովին այլ ճակատագիր էր սպասում:

1943թ. Ասատրյանն ամուսնանում է և 1946թ., երբ հայերի բազում քարավաններ հայրենիք էին վերադառնում, նա կնոջ և զավակի՝ Վարդան Ասատրյանի հետ գալիս է Խորհրդային Հայաստան: Բաղձալի հայրենիքում ապրած և ստեղծագործած տարիներին նկարիչը, հաղորդակցվելով հայրենի չքնաղ բնությանը և ազգային ճարտարապետության գոհարներին, ստեղծել է հայաստանյան բնության անզուգական պատկերներ: Ասատրյանը եկեղեցիներ պատկերող մի քանի տասնյակ աշխատանքներ ունի, որոնք ըստ մեր ունեցած տվյալների, տարբեր հավաքածուների մաս են կազմում և երբևէ միասնական ցուցադրության շրջանակներում չեն ներկայացվել: Դրանց ստեղծումը համակարգված բնույթ է ունեցել և ուղղորդվել է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի կողմից, ում համար առաջնային էր Ասատրյանի օժտվածությունը ջրաներկի տեխնիկայի ասպարեզում և մեծագույն նվիրումը հայկական եկեղեցական ճարտարապետության պատկերմանը:

Չնայած կյանքի և ապրուստի դժվարություններին՝ հայրենիքում Ասատրյանը լիովին տրվում է իր սիրելի մասնագիտությանը: Դառնալով Հայաստանի նկարիչների միության անդամ՝ Յովհաննես Ասատրյանը 1946 թվականից մասնակցել է հանրապետական բոլոր և համամիութենական կարևորագույն ցուցադրություններին⁵:

Խորհրդային մամուլին տված հարցազրույցներում Ասատրյանն անկեղծորեն խոստովանել է, որ իր ստեղծագործական անհատականության ձևավորման գործում կարևոր է եղել ռուս հանճարեղ նկարիչներ Ի. Լևիտանի, Մ. Վրուբելի, Ի. Ռեպինի, Վ. Սերովի աշխատանքների ազդեցությունը, ինչպես նաև Ս. Գերասիմովի, Մ. Սարյանի, Վ. Ֆավորսկու և ուրիշների արվեստը⁶: Այդ տարիներին նկարչի շատ կտավներ նվիրված էին Հայաստանի արդյունաբերությանը, հայրենի երկրի բնությանը և

¹ Տե՛ս Գ. Ասատրյան, Ինքնակենսագրություն, Երևան, 1946 թ., Հայաստանի նկարիչների միության արխիվ, ֆոնդ 1352, Անձնական գործ №19, էջ 15:

² Տե՛ս անտորագիր «Առավոտ» թերթ, Հալեպ, 1943 թ.:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Գ. Ասատրյան, Ինքնակենսագրություն, 1946թ., Հայաստանի նկարիչների միության արխիվ, ֆոնդ 1352, Անձնական գործ №19, էջ 15:

⁵ Տե՛ս Գ. Ասատրյան, Ինքնակենսագրություն, Երևան, 1965թ.:

⁶ Տե՛ս . . . , « . . . » թերթ, Երևան, 10.05.1957 թ.:

կոլտնտեսային գյուղին: Հովհաննես Ասատրյանի արվեստը քննելիս անվանի գրող Վիգեն Խեչումյանը կարծիք է արտահայտում, որ նկարիչը Սարյանի դպրոցում է սովորել գունային իր լեզուն, բայց ամենից առաջ սովորել է իրեն շրջապատող իրական կյանքից, հայրենի երկրի բնությունից, որի վաղուց ծանոթ պատկերի վրա անպայման լույս է սփռել մեր ժամանակի ոգին¹:

1965 թ. հոկտեմբերը նշանակալի էր Հ. Ասատրյանի ստեղծագործական բազմամյա գործունեության մեջ: Նկարչի տան սրահներում բացվում է արվեստագետի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը, ուր ներկայացվում է նրա քսանամյա գեղարվեստական գործունեության արդյունքը: Նույն թվականին Հայաստանի նկարիչների միության ջանքերով լույս է տեսնում Ասատրյանի հարյուր երեսունհինգ նկարներ ներկայացնող երեսուներկու էջանոց մի կատալոգ, որի նախաբանում Խորհրդային Հայաստանի ժողովրդական նկարիչ Արա Բեքարյանը գրել է. «Նրա կտավներում ուժեղ և ազդու գույնը, շեշտված, ընդգծված ձևերը և ֆակտուրան նպաստում են բովանդակության բացահայտմանը. նրանք բոլորն էլ համակված են ընդլվզող նկարչի ոգով, մի արվեստագետի, որ, ինչպես պատանեկության տարիներին, այնպես էլ այժմ սիրահարված է նայում բնությանը, իրերին, մարդկանց և հիանում է աշխարհով»²:

Անվանի արվեստաբան Մարիամ Այվազյանն արվեստասերների ուշադրությունն է սևեռել այն փաստին, որ Ասատրյանը ժամանակին ուսումնասիրել է հայկական մանրանկարչությունը, տարվել է հին վարպետների արտահայտիչ ու գունագեղ արվեստով: Այդ մանրանկարներում նա փնտրել է իր մայրենի լեզուն, որով նա ստեղծագործեց հայրենի երկնքի տակ ու դասվեց շնորհալի նկարիչների շարքը: Ըստ Այվազյանի՝ «Հովհաննես Ասատրյանը քնարերգու նկարիչ է: Նրա նկարները կարծես վարպետորեն գրված փոքրիկ քառյակներ են, որոնք դիտողին փոխադրում են նկարչի բանաստեղծական, անկեղծ ու պարզ ապրումների աշխարհը»³:

Արվեստաբան Էլեն Գայֆեջյանը նույնպես գտնում է , որ ասատրյանական բոլոր գործերին միավորում է նկարչի կենսահաստատ ու լավատեսական տրամադրությունը⁴: Հայ անվանի արվեստաբան Շահեն Խաչատրյանը դրվատանքի խոսքեր է ուղղել Ասատրյանին՝ գրելով, որ Ասատրյանի համար բնորոշը ոչ թե տեսարանի կամ երևույթի վերլուծական կողմն է , այլ նրա բանաստեղծական վերարտադրումը: Նախնական տեսարանը, որից օգտվում է նա, կտավներում ստանում է նոր, պերճ կերպարանք: Նկարչի գծանկարը ձերբազատված է ծանրաբեռնումներից: Ասատրյանական գույնը իրերի նյութական հատկանիշները չի շեշտում: Գույներն ասես նրա մոտ գտվում, մաքրվում են և ունեն ուժեղ հնչողություն: Այս ամենը ծառայում է կենսուրախ, լավատես հույզերի բացահայտմանը: Ասատրյանի գործերում միմիայն ուրախ զգացմունք-

¹ Տես Վիգեն Խեչումյան, Գունավոր լեզու, «Գրական թերթ», Երևան, 7 հուլիսի, 1961 թ.:

² Տես Ա. Բեքարյան, Հ. Ասատրյան, կատալոգ, Երևան, 1965 թ., էջ 1:

³ Տես Մ. Այվազյան, Անհատական ցուցահանդես, «Սովետական արվեստ» ամսագիր, № 12, Երևան, 1965թ., էջ 12:

⁴ Տես . . . , « . . . »թերթ, 253, Երևան, 26.10.1965 թ., էջ 4.:

ները չէ, որ տրոփում են, հաճախ ամենահրճվալի գույներով վրձնված կտավից էլ կարելի է զգալ առանձնության, երբեմն թախծոտ մեղեդի¹:

Յովհաննես Ասատրյանը, Յարություն Կալենցը և Սիյուռքուն կազմավորված մի շարք այլ նկարիչներ Յայաստան էին եկել գեղարվեստական նախասիրությունների պաշարով: Այս ամենը ի մի բերելով և կարևորելով՝ Վահան Յարությունյանը գրում է, որ արդեն ժամանելու պահին Ասատրյանի արվեստը երկփեղկված էր. երփնագրի բնագավառում՝ ժամանակակից Արևմուտքի արվեստին հատուկ լուծումներ, ջրաներկ աշխատանքներում՝ ավանդական ռեալիզմ: Առաջինը արվեստանոցի պատերին էր, երկրորդը տեղ գտավ ցուցահանդեսներում: Ըստ Յարությունյանի՝ Յովհ.Ասատրյանի որոշ ստեղծագործություններում իրենց ինչ-ինչ հետքերն են թողել ֆովիզմին հարած և հետֆովիզմյան դեկորատիվիստները: Ակնհայտ է, որ նկարչի վրա ավելի շատ տեսական նշանակալից ներգործություն են ունեցել Սեզանն ու կուբիստները²:

Յովհաննես Ասատրյանը ճանաչվում է նաև ԱՄՆ-ում՝ իր անհատական ցուցահանդեսի մեծ հաջողության շնորհիվ: 1967 թ. հունվարի 8-ին Ֆրեզնոյի նահանգային քոլեջի Արվեստի սրահում բացված անհատական ցուցահանդեսը բացառիկ երևույթ էր ամերիկահայության համար: Ամերիկյան հեռուստատեսության երեսուներորդ կայանը երեք շաբաթ շարունակ հայտարարում էր այդ եզակի ցուցահանդեսի մասին: Նահանգային քոլեջը երբեք այդքան բազմամարդ ցուցահանդես չէր ունեցել: Արվեստի պրոֆեսոր Յայնզ Քուսելն ինքն է ընտրել մի շարք նկարներ հեռուստատեսությամբ ցուցադրելու համար³: Ֆրեզնոյի «Նոր օր» ամսագրում ամերիկահայ հայտնի գրող Վահե Յայկն անդրադառնալով այս ցուցադրությանը՝ գրել է, որ Ս. Էջմիածնի տաճարը, գեղատեսիլ Սևանը և այլ կոթողներ հայ կառավարության և ժողովրդի հոգածության տակ պահպանվում են իբրև անցյալից մնացած թանկագին գանձեր, և սրանք, կարծես ծովեր ու լեռներ կտրել, ելել, եկել էին Ֆրեզնո՝ քաղցրագույն հիշատակներ բերելու քաղաքի հայրենակարոտ հայությանը: Եվ ինչպես այդ կոթողները, այնպես էլ գեղանկարչի կյանքը կրում է հայության տխուր ճակատագրի կնիքը՝ գերեզմանից դեպի կյանք, խավարից դեպի արևի աշխարհ⁴: Ըստ Վահե Յայկի՝ հայրենադարձությունը ճշմարիտ փրկություն էր հայ արվեստագետի համար, ով իր տաղանդի թևերը բացեց ավելի արագ և ավելի տիրական, որովհետև իր ժողովրդի սերը, հայ կառավարության հոգածությունն ու գնահատանքը նոր կյանք տվեցին նրան: Նկարիչն այդ օրերին հասուն և բեղմնավոր շրջան էր ապրում՝ շարունակելով ստեղծագործել լուսավոր Երևանում, որտեղից գալիս էին նրա լուսավոր արվեստի

¹ Տես Շ.Խաչատրյան, Կենսասիրությամբ լի երանգապնակ, «Սովետական Յայաստան» ամսագիր, № 2, Երևան, 1966թ., էջ 16:

² Տես Վահան Յարությունյան, Քննարկում ենք մեր կերպարվեստի հարցերը. միասնական, բայց ոչ միատարր, «Սովետական արվեստ» ամսագիր, № 6, Երևան, 1966թ., էջ 15-20:

³ Տես անստորագիր, Սովետահայ նկարիչ Յ.Ասատրյանի ցուցահանդեսը, «Լրաբեր» թերթ, Նյու-Յորք, 10.06.1967 թ.:

⁴ Տես Վահե Յայկ, Յայաստանն էր բերուած նկարներու մեծարէնք ցուցահանդես մը, "Nor or", Jan. 31, 1967, Fresno, California.

ճառագայթները՝ օտար աշխարհներում հայի հոգին վերանորոգելու և բերելու հորե-նական անգին հիշատակներ¹:

Հավանաբար, իր ապագա փեսա, արվեստի մեծ գիտակ Ալբերտ Նալբանդյանի հովանավորությամբ կազմակերպված այս գեղեցիկ ցուցադրությունը և իր արվեստի այսքան ջերմ ընդունելությունը առիթ եղավ նկարչի համար՝ որոշում կայացնելու հեռանալու հայրենիքից՝ առմիշտ միանալու ամերիկահայ հայրենակիցներին:

1968 թ. հունիսին Ասատրյանը Բեյրութում էր, որտեղ Կալըրի Մանուկ սրահում հունիսի 10-ին բացվելու էր նրա ցուցահանդեսը: Նկարահանդեսին ներկայացված հիսուն յուզաներկ և ջրաներկ ստեղծագործությունները ցուցադրում էին Ասատրյանի վրձնած Չայաստանի նշանավոր վանքերը, հայրենի երկրի գյուղերն ու թաղերը, դիմանկարներ, նատյուրմորտներ և այլևայլ տեսարաններ²: Նախքան ցուցադրությունը Ասատրյանը հարցազրույցներից մեկում հպարտորեն ասել է. «Չայրենի հողը իմ ուտքերի տակ, կապույտը իմ գլխի վերև, վերածնված կյանքն իմ հոգում, իրականացված երազներ իմ բաբախող սրտում, ես էլ ինձ նման շատերի պես մեկ անգամ ընդմիշտ և կյանքում առաջին անգամ լինելով ճանաչեցի այն միակ ու ճշմարիտ իրողությունը, ինչու՞ չէ իրականությունը, թե մարդ արարածին միայն ու միայն Մայր Չայրենիքն է երջանկացնում, իրական մարդու աստիճանի բարձրացնում: Առանց հայրենիքի չկա մարդկային ու մարդու չափանիշ»³:

Ինչպես հայտնի է դառնում Չայաստանի Նկարիչների միության արխիվային նյութերից, Չովհաննես Ասատրյանը 1974 թ. լքել է միության շարքերը՝ առմիշտ հաստատվելու համար Բեյրութում⁴: Կարճ ժամանակ անց՝ 1975 թ. Ասատրյանների ընտանիքն արդեն Լոս-Անջելեսում էր: Այնտեղ է ապրում և ստեղծագործում նա՝ ստեղծելով նորանոր հրաշալի կտավներ:

Խորհրդային Չայաստանում առկա մշակույթի հանդեպ մշտական գաղափարական ճնշումը, արվեստագետների գործունեության և ստեղծագործությունների պարբերական վերահսկումը հատուկ ծառայությունների կողմից այնքան էին հոգնեցրել ու մաշել առանց այն էլ դեռ մանկուց այդքան դժվարությունների միջով անցած նկարչին, որ նա, հոգու կսկիծը խեղդելով, այնուամենայնիվ, կատարում է այդ դժվարին քայլը: Ասատրյանի կյանքում հերթական մեծ փորձությունն էր. տասնամյակների ստեղծագործական բեղուն ուղի անցած, հայրենի երկրում սիրված և ճանաչում ձեռք բերած նկարիչը առհավետ մեկնում էր հայրենիքից մի նոր, տակավին օտար աշխարհ:

ԱՄՆ տեղափոխվելու արդյունքում մեծ փոփոխությունների է ենթարկվում նկարչի կյանքը և ստեղծագործական ուղին: Ասատրյանի վրձինը ԱՄՆ-ում բոլորովին այլ կտավներ է ծնում: Մինչև վերջին տարիները, այսինքն մինչև Ամերիկա հաստատվելը,

¹ Տես նույն տեղում:

² Տես Ա.Պ., Չայրենի գեղանկարիչ Չովհաննես Ասատրյան, «Այգ» օրաթերթ, Բեյրութ, 2 հունիսի, 1968 թ.:

³ Տես Վ. Թութունջյան «Ձարթոնք» թերթ, «Չայրենական նկարիչ Չովհաննես Ասատրյանը մեր մեջ», Բեյրութ 4 հունիսի, 1968թ.:

⁴ Տես 9 24
1974 ., Չայաստանի նկարիչների միության արխիվ, ֆոնդ 1352, Անձնական գործ №19, էջ 22:

նկարիչը ոճով տպավորապաշտ է եղել. նյութը հայրենի բնությունն էր, երբ ապրում էր Հայաստանում: Վերջին շրջանի աշխատանքերը, ինչպես ինքը՝ Ասատրյանն է նշել, «մտային» են և այլևս բնությունը ներկա չէ նրանց մեջ. երազային նկարներ են, իրականից հեռու. գույները և ձևերը յուրահատուկ ոճով են միաձուլվել իրար, ստեղծվել են նոր պատկերներ: Այն հարցին, թե արդյոք այդ զարգացումն ի վերջո հասնելու է անհեթեթին, Ասատրյանը պատասխանում է, որ ոչինչ որոշված չէ, ժամանակին պետք է ենթարկվել. երբեմն փոփոխություններն անխուսափելի են¹:

1985 թ. 71-ամյա ծերունագարդ նկարիչը վերստին ներկայանում է ամերիկահայ արվեստասեր հանրությանը, երբ Հայկական Բարեգործական ընդհանուր միության ջանքերով կազմակերպվում է ցուցահանդես՝ նվիրված վաստակաշատ արվեստագետի 50-ամյա ստեղծագործական ուղուն (1935-1985 թթ.): Ասատրյանի հորելյանական ցուցադրությունն արժանացել է ամերիկահայ մամուլի սևեռուն ուշադրությանը և լուսաբանվել տարբեր հոդվածներում: Ամերիկաբնակ արվեստաբաններից Հասմիկ Գուլյանն իր ակնարկում ընդգծել է Ասատրյանի նրբազգաց մոտեցումը բնօրինակի հանդեպ, որն օգնում է նկարչին գտնել պատկերի տեսական-հուզական ամբողջական լուծումը, բացահայտել բովանդակությունը: Դրան է միացել նաև ջրաներկի հմուտ օգտագործումը, որը վարպետորեն է կատարել Հովհաննես Ասատրյանը²: Վերոնշյալ հոդվածում Հասմիկ Գուլյանը մեջբերում է ասատրյանական խոհերը նախ գույնի, ապա՝ երիտասարդ նկարիչների մասին. «Դասական նկարիչները օգտագործում էին հողային գույները: Ես ծիածանի յոթը գույների սիրահարն եմ, բնության հազարերանգ լույս ու ստվերի խաղերի ջատագովը Քլոդ Մոնեի նման»: Տեղի երիտասարդ նկարիչների մասին արվեստագետն ասում է. «Ներկայիս երիտասարդությունը վայրի, գեղեցիկ մտրուկի նման վազում է, ցատկում...: Բայց չէ՞ որ արվեստի մեջ մեկը մյուսով է պայմանավորված: Եվ անհատականության կազմավորումը ժամանակի, չափի զգացողության մեջ է կայանում»³:

Հորելյանական ցուցադրությունից հետո ամերիկահայ և խորհրդահայ մամուլի տվյալները Հովհաննես Ասատրյանի կյանքի և ստեղծագործական գործունեության մասին այլևս ընդհատվում են: Տարիներ առաջ նկարչի արվեստի ուսումնասիրության համար խթան և մեկնակետ հանդիսացավ արվեստագիտության դոկտոր Լ.Բ. Չուգասյանի կողմից ԱՄՆ-ից հեղինակի որոշ ստեղծագործությունների պատճենների ու նրա ձեռքով գրված ինքնակենսագրականի Հայաստան բերելը: Այստեղից էլ մեկնարկում է Հովհաննես Ասատրյանի կյանքի և ստեղծագործության մասին սույն ուսումնասիրությունը:

2002 թ. մահանում է Հովհաննես Ասատրյանի սիրելի կինը՝ Նվարդը, որ նկարչի կյանքում մեծ ողբերգություն էր: Ասատրյանը կյանքից հեռանում է 2006 թ. հուլիսի 28-ին՝ 92 տարեկան հասակում, ավելի քան 70-ամյա ստեղծագործական ուղի

¹ Տես անստորագիր, «Գեղանկարիչ Յ. Ասատուրեանի ցուցահանդեսը», «Նոր օր Եռօրեայ», Լուս Անջելես, 1 հոկտոմբերի, 1985 թ.:

² Տես Հասմիկ Գուլյան, Յովհաննես Ասատուրեանի անցած 50-ամեայ ճանապարհ, «Նոր օր Եռօրեայ», Լուս Անջելես, 15 հոկտեմբերի, 1985 թ.:

³ Տես նույն տեղում:

անցնելով Հալեպում, Բեյրութում, Երևանում և ավարտելով իր կյանքն ու ստեղծագործական գործունեությունը Լոս-Անջելեսում:

Լիլիթ Խաչատրյան, Համառոտ ակնարկ Հովհաննես Ասատրյանի կյանքի և ստեղծագործության – Հայ գեղանկարիչ Հովհաննես Ասատրյանը, է իր մասնագիտական ուղին սկսել է Սիրիայում և Լիբանանում (1932-1946 թթ.), հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան 1946 թ. և ապրել է այստեղ մինչև 1974 թ.: Դեռևս Սիրիայում նկարիչը ցուցաբերել է ջրաներկի տեխնիկայում աշխատելու մեծագույն վարպետություն: Բաղձալի հայրենիքում ապրած և ստեղծագործած տարիներին նկարիչը, հաղորդակցվելով հայրենի չքնաղ բնությանը և ազգային ճարտարապետության գոհարներին, ստեղծել է հայաստանյան բնության անզուգական պատկերներ: Ասատրյանը եկեղեցիներ պատկերող մի քանի տասնյակ աշխատանքներ ունի, որոնց ստեղծումը համակարգված բնույթ է ունեցել և ուղղորդվել է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի կողմից: Կիլիկիայում ծնված նկարիչը, ում ծնողները Հայոց ցեղասպանության զոհերը, ապրեց Հայաստանում 28 տարի: 1975 թ. Ասատրյանը տեղափոխվում է Լոս Անջելես: Գեղանկարիչը կյանքից հեռացել է 2006 թ. 92-ամյա հասակում: Ասատրյանի ստեղծագործությունները գտնվում են Հայաստանի ու Սփյուռքի թանգարաններում և մասնավոր հավաքածուներում:

Лилит Хачатрян, Краткий очерк жизни и искусстве живописца Ованеса Асатрян –

1932-1946 ., 1946 1974 .
I-
28 1975
92 2006 .

Lilit Khachatryan, Hovhannes Asadourian, Life and Art – Armenian painter Hovhannes Asadourian who began his artistic career in Syria and Lebanon (1932-1946), repatriated to Soviet Armenia in 1946 and lived there till 1974. Already living in Syria, the painter revealed his talent for landscape painting and his mastery of watercolor painting technique. While living in Armenia and getting acquainted with the marvelous nature and architectural masterpieces of his motherland he created heavenly landscapes of Armenia. His series of watercolors of Armenian churches were commissioned by the Catholicos of All Armenians, Vazgen I, who donated many of them to his guests, including clergy from Armenian Diaspora. The born in Cilicia artist and orphan of the Armenian Genocide, the victim of a turbulent life, finally came to settle in Los Angeles in 1975. The painter passed away in 2006. Asadourian's paintings are scattered in different private, public collections in Diaspora and in Armenia.

Լիլիթ Խաչատրյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի ասպիրանտ

